Ի՞նչ կարելի է անել եթէ ի վիճակի չեմ հոգալու երեխաներիս պատվաստման ծախսերը

Ընդհանրապես պատվաստումները ձրի են այն երեխաների համար որոնց ընտանիքները ի վիճակի չեն պատվաստման ծախսերը հոգալու։ Հեռաձայնեցեք 800-232-2522 համարով կամ ձեր տեղամասի կամ նահանգի առողջապահական բաժին, իմանալու թե որտեղ կարող եք գնալ ձրի կամ չնչին գումարով պատվաստումներ ստանալու համար։ Դրանի՛ց է կախված ձեր երեխաների առողջությունը.

Եւ ահավասիկ ընկերական հիշեցում ծնողներին.

Չափահասները նույնպես կարիքը ունեն պատվաստների։ Հեռաձայնեցեք ձեր դարմանատուն կամ նահանգի առողջապահական բաժին իմանալու թե ինչպիսի պատվաստների կարիքը ունեք եւ կամ երբ է ձեր հաջորդ պատվաստման ժամանակը։ Ձեր երեխաների առողջ մնալու հանգամանքը վստահված է ձեզ.

0-18 տարեկան
բոլոր երեխաները
կարիք ունեն
hepatitis B պատվաստի.



Յուրաքանչյուր անհատ կարիք ունի պատվաստման.

Եթէ դուք ի վիճակի չեք պատվաստման ծախսերը հոգալու եւ կամ չգիտեք թե որտեղ կարելի է պատվաստվել, կապնվեցեք ձեր քաղաքային, շրջանային կամ նահանգային առողջապահական բաժնի հետ եւ կամ հեռաձայնեցեք 800-232-2522 համարով։



Immunization Action Coalition
1573 Selby Avenue, Suite 234
St. Paul, MN 55104
651-647-9009
www.immunize.org
www.vaccineinformation.org

Այս գրքույկի բովանդակության տեխնիկական ճշգրտությունը վերաքննվել է Centers for Disease Control and Prevention-ի կողմից։ Այդ հեղինակային իրավակալությունից զերծ է։ Դուք կարող եք ազատորեն փոփոխության ենթարկել այն ձեր դարմանատան կամ համայնքի պահանջարկներին հարմարեցնելով։ Այսուհանդերձ, եթէ որեւէ փոփոխում կատարեք, ապա ընկալագրեք որ այդ վերցվել եւ ձեւափոխվել է Immunization Action Coalition-ից։

www.immunize.org/catg.d/4055ar.pdf
Item #P4055-14 Armenian (4/98, reviewed 8/04)

Բոլոր երեխաները կարիքը ունեն hepatitis B պատվաստների



նորածինները



մանուկները



ինչպես նաեւ մեծ երեխաները

Ինչ է hepatitis B-ն

Hepatitis B-ն լյարդի լուրջ հիվանդություն է որը առաջանում է վիրուսից: Այս վիրուսը կարող է մուտք գործել արյան շրջանառության մեջ, վնասել լյարդին եւ ծանր հիվանդություն պատճառել: Որոշ դեպքերում վիրուսը կարող է մնալ մարմնում հավիտյան եւ լյարդին պատճառել հարատեւ վնաս:

Ի՞նչպես են երեխաներն ու պատանիները ունենում hepatitis B

Բազմաթիվ ձեւերով: Hepatitis B-ն կարող է տարածվել.

- վարակված անհատի արյան կամ մարմնային հեղուկների հետ շփվելով
- վարակված անհատի օգտագործած նույն ատամի խոզանակը, ցամքոցը կամ ածելին այլ անհատներ գործածելով
- մարդու խածվածք
- սեռական հարաբերություն վարակված անհատի հետ
- ոչ մանրեազերծված սարքերով ականջի, մարմնի ծակում եւ ասեղնազարդում

Հաջորդական երեք պատվաստումներով այս լուրջ հիվանդությունը կարող է կանխարգելվել:

Ի՞նչու իմ բոլոր երեխաները կարիքը ունեն hepatitis B պատվաստների

Միացյալ Նահանգներում գլխավոր բժշկական կազմակերպությունները համաձայն են որ 0-18 տարեկան բոլոր երեխաները պետք ունեն hepatitis B պատվաստների այս հիվանդությունից պաշտպանվելու համար: Այսօր, բոլոր մանուկները պետք է ընդունեն hepatitis B-ի պատվաստներ, իրենց մյուս պատվաստների հետ առընթեր: Եթե ձեր երեխաներն ու պատանիները մանուկ հասակում չեն պատվաստվել hepatitis B-ի դեմ, ապա նրանց պատվաստեք այժմ:

Արդյո՞ք իմ երեխան hepatitis B վիրուսով վարակվելու առավել վտանգին է ենթակա

Որեւէ մեկը կարող է ունենալ hepatitis B: Սակայն, այն երեխաները կամ նրանց ծնողները որոնք ծնվել են Միացյալ Նահանգներից դուրս որտեղ hepatitis B-ն եղել է լուրջ հիվանդություն, առավել ենթակա են hepatitis B վիրուսից վարակվելու վտանգին:

Որոշ վայրեր ուր hepatitis B-ն լուրջ հիվանդության բնույթ է կրում ընդգրկում է՝ Ասիան, Աֆրիկան, Խաղաղականի կղզիները, Արեւելյան Եվրոպան, նախկին Սովետական Միությունը եւ Հարավային Ամերիկան:

Եթե դուք վստահ չեք, թե որքանով լուրջ բնույթ է ունեցել hepatitis B-ն ձեր ծննդավայրում, ստուգեք ձեր բժիշկի կամ հանրային առողջապահական բաժնի հետ: Ձեր բժիշկը կարող է քննել ձեր երեխաներին առաջին պատվաստման ժամանակ, վստահ լինելու համար թե նրանք արդեն վարակված չեն hepatitis B վիրուսով:



Արդյո՞ք պետք է թույլատրեմ իմ երեխաները պատվաստ ընդունեն դպրոցում

Այժմ, դպրոցում շատ երեխաների առաջարկվում է hepatitis B-ի դեմ պատվաստել: Եթե դպրոցում ձեր երեխային առաջարկել են պատվաստել, ապա դուք ձեզ եւ ձեր երեխային կը խնայեք բժիշկի գրասենյակ հաճախելու երեք այցելություն:

Ո՞րքան ապահով է այս պատվաստը

Hepatitis B պատվաստը գոյություն ունեցող ամենաապահով պատվաստներից մեկն է: Միացյալ Նահանգներում 1981 թվականից ի վեր օգտագործվում է եւ ապացուցվել է որ ապահով է ու գործող: